



ՀԱՄԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



«30» 07 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 140 - 24

Նախաձեռնող՝

«Էկոֆիշ Թրեյդ»ՍՊԸ
Արարատի մարզ, Ձորակ բնակավայր

Գործունեությունը՝

Մասիս համայնքի Ձորակ բնակավայրի Վ.Սարգսյան 1-ին նրբ.
13 հասցեում գործող ձկնաբուծարանի փեխնիկական
վերազինում
Արարատի մարզ

Առդիր՝ 5 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

ԲՓ № 140 - 24
« 30 » հուլիսի 2024թ.

Մասիս խոշորացված համայնքի Ջորակ բնակավայրի վարչական սահմաններում Վ.Սարգսյան 1-ին նրբ. 13 հասցեում գործող ձկնաբուծարանի տեխնիկական վերազինման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Նախաձեռնող՝ «Էկոֆիշ Թրեյդ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝ «Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը՝ Արարատի մարզ

Ներածական մաս. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք, ՀՕ-150) 12-րդ հոդվածի 3-րդ մասի 13) կետի «բ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Ա» կատեգորիայի:

Նկարագրական մաս. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացված նախնական գնահատման հայտի համաձայն՝ «Էկոֆիշ Թրեյդ» ՍՊ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ իրականացնում է ձկնաբուծական գործունեություն՝ Ընկերությանը սեփականության իրավունքով տրամադրված ընդհանուր 16 հա տարածքում /կադաստրային, ծածկագիրը՝ 03-044-0125-0033/: Հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլն արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների: Գործունեության տարածքը գտնվում է Ջորակ բնակավայրի վարչական սահմաններում՝ բնակավայրից մոտ 0.9 կմ հեռավորության վրա:

Տարածքը երկրաբանական տեսակետից իրենից ներկայացնում է Արարատյան դաշտի հարավ-արևելյան մասը կազմող մինչև 4° լանջերի թեքությամբ, ծովի մակարդակից 826-829 մ բարձրությամբ հարթավայր: Ձկնաբուծարանի շրջանում զարգացած են մարգագետնաճահճային աղուտ-ալկալի կավավազային և ոռոգելի խոնավ-մարգագետնային գորշ աղուտ-ալկալի հողերը:

Ընկերության գործունեության իրականացման արդյունքում լանդշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա հնարավոր վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում, քանի որ տարածքն ամբողջությամբ բետոնապատ է, առանձին հատվածներ՝ ասֆալտապատ: Ձկնաբուծարանի տարածքում բնական բուսածածկը պահպանված չէ, հողային նոր աշխատանքներ չեն նախատեսվում: Տարածքում հաշվառված չեն բնության հատուկ պահպանվող



պատմամշակութային հուշարձաններ: Ձկնաբուծարանի տարածքին ամենամոտ գտնվող բնության հուշարձանը «Դաշտաքար» քարանձավն է, հեռավորությունը կազմում է մոտ 35 կմ: Ձկնաբուծարանից մոտ 25 կմ հեռավորության վրա գտնվում է «Խոր վիրապ» պետական արգելավայրը: ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ տարածքում չկան:

Ձկնաբուծարանի շրջանում խոշոր ջրագրական միավորները Հրազդան և Սև ջուր գետերն են:

Գործունեության տարածքը մտնում է Արարատյան դաշտավայրի չոր ցամաքային կլիմայական գոտում, չափավոր ցուրտ ձմեռով և շոգ ամառով (ամռանը մինչև +40°C, իսկ ձմռանը՝ -10°C): Ընդհանուր առմամբ՝ Մասիս տարածաշրջանում օդի հուլիսյան ջերմաստիճանը տատանվում է +22°C -ից +26°C տիրույթում, իսկ հունվար ամսի միջին ջերմաստիճանը դիտվում է -5-0°C: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 200-300 մմ: Քամու միջին արագությունը կազմում է 2-3 մ/վրկ:

Համաձայն Հայտում ներկայացված տեղեկատվության՝ Ընկերությունը զբաղվում է ծիածանափայլ իշխանի բուծմամբ և տարվա միջին արտադրողականությունը կազմում է 392տ ապրանքային ձուկ, որի համար գնվում է 30-50 գրամանոց՝ 367176 հատ մանրածուկ: 367176 հատ մանրածուկից ելքը կազմում է մոտ 65%՝ 238664 հատ ձուկ, պրանքային ձկան քանակը դառնում է 238664 հատ, ձկան մոտ 85%-ը՝ 202864 հատ ձուկ:

Ընկերության կողմից օգտագործվող կերերի որակական ցուցանիշները համապատասխանում են բուծման համար նախատեսված կերերի համար սահմանված տեխնիկական պայմաններին և պահանջներին: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ արտադրված ձկան ամեն տոննայի դիմաց շրջակա միջավայր արտանետվող ազոտի և ֆոսֆորի քանակը կախված է կերի բաղադրությունից, կերակրման ռեժիմից, կերի քանակից, կերի յուրացման չափից, ջրի ջերմաստիճանից: Դրանց մեղմացնող միջոցառումները ներառում են այնպիսի կերաբաշխման համակարգերի նախատեսում, որոնց ներդրմամբ հնարավոր կլինի առավելագույնի հասցնել կերային գործակիցը և նվազագույնի հասցնել թափոնների գոյացումը: Ձկան կերի բաղադրության նորմայավորումը կնպաստի նաև կերի յուրացման աստիճանի բարձրացմանը: Կիրառվում է ԵՄ տարածքում (Իտալիա) արտադրվող SKRETTING էքստրուդացված կերը: Կերի բաղադրությունն է՝ պրոտեին 45.22%, յուղ 12.06%, կալցիում 1.22%, ֆոսֆոր 0.8%, ցելյուլոզա 3.97%, խոնավություն 9.2%: Կերի հատիկների չափը՝ մոտ 3մմ: Ձկների կերակրման նորմը կապված է ջրավազաններում ջրի փաստացի ջերմաստիճանից և ձկան քաշի %-ից:

Ձկնաբուծական տնտեսության ենթակառուցվածքները զբաղեցնում են մոտ 16 հա: Արտադրական տարածքում առկա են 11 ջրավազան՝ 656.22 քմ, 286.84 քմ, 749.2 քմ, 1257.6 քմ, 4894.44 քմ, 472.0 քմ, 718.75 քմ, 1467.0 քմ, 1690.0 քմ, 7586.18 քմ 4377.6 քմ և 4 օժանդակ շինություն՝ 196.61 քմ, 404.32 քմ, 148.78 քմ, 150.1 քմ մակերեսով: Ձկնաբուծական լճակներում ապահովված է բնական լուսավորվածությունը: Ջրավազանների վրա տեղադրված աէրատորների միջոցով ապահովվում է ջրի շրջապտույտ՝ անհրաժեշտ թթվածնով հագեցնելու համար և ստեղծվում է բարենպաստ միջավայր կենդանիների բուծման համար: Կերակրումը կատարվում է սահմանված նորմերին համապատասխան, կերի ամբողջ ծավալը յուրացվում է ձկան կողմից: Կերի մնացորդի նստվածքներ չեն առաջանում: Կերի դոզան և կերակրման միջակայքերը վերահսկվում են հերթապահ օպերատորի կողմից:



Ընկերության ջրօգտագործումը ներկայումս 7 գործող խորքային հորից՝ առավելագույնը 17679.243 հազ.մ³/տարի, 48436.0մ³/օր, 560.0լ/վ ծավալով իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության կողմից տրված 2023թ. փետրվարի 10-ի N0056-23 ջրօգտագործման թույլտվության պայմաններին համապատասխան: Ձկնաբուծական լճակներից հեռացվող արտահոսքն ավազաններում շրջանառվելուց հետո դրենաժային համակարգով (15911.323հազ.մ³/տարի, 43593.0մ³/օր, 504.0լ/վ ծավալով) հեռացվում է Հրազդան գետ՝ ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված պայմաններին համապատասխան՝ ապահովելով կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի քանակները, թափվելով Հրազդան գետ խառնման արդյունքում տեղի է ունենում ջրում պարունակվող օրգանական միացությունների նոսրացում:

Ընկերության կողմից ջրաքանակի ավելացում չի նախատեսվում, ապահովվելու են ջրօգտագործման և ձկնարտադրության համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված տարեկան ծավալների չափաքանակներն: Ձեռնարկության ջրառի կորդինատական կետերն են՝

- | | | | |
|--------------------|-----------------|--------------------|-----------------|
| 1. X=44° 23' 24.4" | Y=40° 04' 30.3" | 5. X=44° 23' 21.3" | Y=40° 04' 22.5" |
| 2. X=44° 23' 20.2" | Y=40° 04' 30.3" | 6. X=44° 23' 20.9" | Y=40° 04' 18.8" |
| 3. X=44° 23' 19.9" | Y=40° 04' 26.9" | 7. X=44° 23' 23.2" | Y=40° 04' 26.5" |
| 4. X=44° 23' 16.5" | Y=40° 04' 25.9" | | |

ջրահեռացման կետերը՝ X=44° 23' 16.32" Y=40° 04' 18.34"

Ընկերությունն ունի ոլորտը կարգավորող լիազոր մարմնի կողմից համաձայնեցված ջրօգտագործման և ջրահեռացման անհատական նորմաներ: Կեղտաջրերի մաքրում չի կատարվում: Ջրօգտագործման թույլտվությամբ՝ կեղտաջրերով ջրային ռեսուրսներ թափվող վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի N°30 նորմերով սահմանվել են կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի նորմերը: Ընկերությունը հանդիսանում է «ՀԵՑ» բաժանորդ, էլեկտրամատակարարումը կատարվում է պայմանագրային հիմունքներով: Տարածքում գազաֆիկացում չի նախատեսվում:

Տվյալ գործունեության փորձաքննության գործընթացի շրջանակներում Ընկերության կողմից ձկնաբուծարանի ընդլայնում չի նախատեսվում և չի ներառում հողային աշխատանքների իրականացում և հողային ռեսուրսների վրա ազդեցություն: Բուն ձկնաբուծարանի տարածքն ամբողջությամբ բետոնապատ է, առանձին հատվածներ՝ ասֆալտապատ: Բաց հողային տարածքներ ձկնաբուծարանի սահմաններում չկան:

Ձկնարդյունաբերական կազմակերպություններում առաջացող թափոնների կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան:

Շահագործման փուլում ձկնաբուծական ջրավազաններում չյուրացված կերը և ձկների չվերամշակված արտաթորանքները, հեռացվելով շրջակա միջավայր, կարող են սննդարար տարրերի լրացուցիչ աղբյուր հանդիսանալ: Գոյացող թափոնը /կերի ավելցուկից և ձկան արտաթորանքների պինդ զանգվածից գոյացող նստվածք/ համապատասխան մշակումից հետո կարող է օգտագործվել որպես պարարտանյութ:

Ձկնային տնտեսությունում առաջացող թափոնատեսակներն են.



- կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի), տարեկան մոտ 1.8 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի մոտակա աղբավայր,

- սննդամթերքի արտադրության հոսքաջրերի նստվածք՝ մոտավոր 100 կգ/տարեկան քանակով:

Համաձայն Հայտի՝ տնտեսությունում ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով ջրառի բոլոր կետերում տեղադրել են ուլտրաձայնային ծախսաչափեր:

Նախնական գնահատման հայտով ձկնաբուծարանի շահագործման աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն /մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

- ջրի որակի մշտադիտարկում ջրառի կետում եռամսյակը մեկ անգամ,
- ջրի որակի մշտադիտարկում ջրավազանում եռամսյակը մեկ անգամ,
- ջրի որակի մշտադիտարկում ջրահեռացման կետում եռամսյակը մեկ անգամ,
- ջրի որակի մշտադիտարկում Հրազդան գետ թափման կետում հոսքն ի վար 100մ եռամսյակը մեկ անգամ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան հատկացնել 8950000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Արարատի մարզի Զորան բնակավայրի ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինը և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ներքին գործերի և առողջապահության նախարարությունները, Արարատի մարզպետարանը, որոնց դիտողությունների ու առաջարկությունների հիման վրա հայտը լրամշակվել է:

Ներկայացված ձկնաբուծական տնտեսությունում շահագործվող 7 խորքային հորերից միայն 2-ի վրա էր տեղադրված ուլտրաձայնային ծախսաչափ: Համաձայն Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 14-ի «Մակերևութային ջրերի օգտագործված պաշարների և ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների հաշվառման նպատակով տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի տեղադրման, կնքման և շահագործման կարգերը սահմանելու մասին» N 2207-Ն որոշման՝ մինչև 2024 թվականի հունվարի 1-ը ջրառի բոլոր կետերում անհրաժեշտ էր տեղադրել ուլտրաձայնային ծախսաչափեր, ինչպես նաև Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2305-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ ջրային ռեսուրսների ջրային հաշվեկշռի անհավասարակշռության վերականգնման և պահպանման նպատակով Ընկերությունը պետք է ներդնի փակ շրջանառու համակարգ:

Հայտը վերադարձվել է ձեռնարկողին լրամշակման՝ վերը նշված իրավական ակտի պահանջն իրականացնելու նպատակով:



Ընկերությունը ներկայացրել է լրամշակված Հայտը և լիազոր մարմնի կողմից հաստատված «Մակերևութային ջրերի օգտագործված պաշարների և ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների հաշվառման նպատակով տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ սարքերի ու փականների կնքման N 287-24 ակտը», համաձայն որի 7 խորքային հորերի խողովակաշարերի վրա տեղադրված են ուլտրաձայնային ծախսաչափեր: Վարչական դատարանի թիվ ՎԴ/5106/05/24 վարչական գործով 2024 թվականի մայիսի 16-ի որոշմամբ՝ փակ շրջանառու համակարգի ներդրման գործընթացը կասեցվել է:

Փորձաքննական պահանջներ

- Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական թիվ ՎԴ/5106/05/24 վարչական ակտով, համաձայն որի 2024 թվականի մայիսի 16-ի որոշմամբ կասեցվել է Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում փակ շրջանառու համակարգի ներդրման կարգը սահմանելու մասին» N 2305-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ մինչև գործի դատաքննության ավարտը:

- Ձկնաբուծարանի շահագործման ընթացքում անհրաժեշտ է հետևել Հայտում ամրագրված բնապահպանական կառավարման պլանի և միջոցառումների ծրագրի իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

Մասիս խոշորացված համայնքի Զորակ բնակավայրի վարչական սահմաններում Վ.Սարգսյան 1-ին նրբ. 13 հասցեում գործող ձկնաբուծարանի տեխնիկական վերազինման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ առաջատար մասնագետ՝

Ռուզան Մակինյան